ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ե 40/11-7205

«22» 10 2025թ.

ՀՀ, ք.Երևան 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (+374 60) 37-77-37, Հեռ.՝ (+374 10) 44-34-80
Հեռ.՝ (+374 60) 37-26-56, Հեռ.՝ (+374 10) 44-29-04

«ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ՝
ԱՐՏՅՈՄ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ
ՀՀ, Երևան, Նոր Նորք, Գայի պողոտա 31/34,
ՀՎՀՀ 01075543
հեռախոս 098815665
էլ.հասցեն՝ bghda88@gmail.com

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի (ամբողջությամբ) լուծելու մասին

Հարգելի պարոն Բաղդասարյան,

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության և «ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ-ի միջև 25.07.2025թ.-ին՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ առանց ֆինանսական միջոցների նախատեսման, կնքվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/45» ծածկագրով գնման պայմանագիր (Այսուհետև՝ Պայմանագիր)՝ «ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների կարիքների համար ատրճանակի պատյան և ամրակապ ձեռք բերելու վերաբերյալ, որի ընդհանուր գումարը կազմում է 499.999,2 (չորս հարյուր ինսունիննը հազար ինը հարյուր ինսունիննը ամբողջ երկու տասնորդական) ՀՀ դրամ:

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը՝ համապատասխան գնումների պլանով, Պայմանագրով նախատեսված ատրճանակի պատյանի և ատրճանակի ամրակապի ձեռքբերման համար հատկացրել է անհրաժեշտ ֆինանսական միջոցներ և 30.09.2025թ.-ին ծանուցում է ներկայացրել «ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ-ին համապատասխան համաձայնագիր կնքելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացրել էր N1 համաձայնագրի նախագիծը: Նշված համաձայնագիրը «ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ-ն՝ համաձայն N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/45» պայմանագրի 8.15 կետի, պարտավոր էր ստորագրել 15 աշխատանքային օրվա ընթացքում, որը լրացել է 21.10.2025թ.-ին, սակայն «ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ-ն չի ստորագրել նշված համաձայնագիր:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Այսուհետև՝ Կարգ) 33-րդ կետի, 12-րդ ենթակետը և Պայմանագրի 8.15 կետն, ըստ որի «Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և

պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է», «ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ-ի կողմից խախտվել է պայմանագրով սահմանված պարտավորությունը և ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը, ղեկավարվելով գնումների գործընթացը կարգավորող իրավական ակտերով, միակողմանի, հրաժարվում է կնքված պայմանագրից, հետևաբար՝ **2025թ.-ի հոկտեմբերի 22-ին միակողմանի ամբողջությամբ լուծում է ՀՀ ԱՆ քրեակատարաողական ծառայության և «ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ-ի միջև 25.07.2025թ.-ին կնքված ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-25/45» ծածկագրով պայմանագիրը՝ 499.999,2 (չորս հարյուր ինսունիննը հազար ինը հարյուր ինսունիննը ամբողջ երկու տասնորդական) ՀՀ դրամ գումարի չափով,** ինչպես նաև պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջների՝ «ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ 88» ՍՊԸ-ն, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, պետք է ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ գնման ընթացակարգը իրականացվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ առանց ֆինանսական միջոցների նախատեսման և առանց հայտի ապահովման, ուստի հայտի, պայմանագրի և որակավորման ապահովումների գումարներ չեն կարող գանձվել:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ՏԻԳՐԱՆ ԻԳԻԹՅԱՆ**

Կատարող՝ Տիրան Խաչատրյան,
ՀՀ ԱՆ ՔԿԾ ՆՏԱ բաժին,
Հեռ.՝ 060-37-12-80: